Ավետիք Իսահակյան

Արազին

Մեր սարերեն, խո՛ր ձորերեն
Պըղտո՞ր – պըղտո՞ր կուգաս, Արա'զ,
Մեր սրտերեն, խո՛ր աչքերեն
Արուն քամեր, կերթա՛ս, Արա՛զ…
Մեր սարերեն, մո՛ւթ ձորերեն
Ոլո՞ր – մոլո՞ր կերթաս, Արա՞զ,
Ա՞յ, սարե՞ր, ջան սարե՞ր,
Ալմաստի՛ սարեր…

Քանի՞ հարուր – հարուր տարի
Մեր սրտերեն ելեր, կերթաս.
Մեր դարդերով, մեր ցավերով
Խոլո՞ր – մոլո՞ր կերթաս, Արա'զ.
Մեր սարերեն, մո'ւթ ձորերեն
Մեր դարդերով կերթա՞ս, Արա'զ,
Ա՞յ սարեր, Հայ – սարե՞ր,
Ջան անո՞ւշ սարեր…

Ու դարերով, մեր դարդերով
Էս աշխարհի քար – ապառաժ,
Անգութ խըղճին միշտ զարնելով՝
Տըխուր – տըրտում կերթաս, Ար՞ազ…
Մեր սարերեն, խոր ձորերեն

Արուն քամեր, կուգա՞ս, Արա՞զ.
Ա՞յ սարե՞ր, ջա՞ն ձորե՞ր,
Ջավահի՞ր սարե՞ր…

Ա՞խ, աշխարհը անխըղճմտանք
Քեզ չի գրթա, ազիզ – Արա՛զ,
Քու բողոքին, քու մորմոքին
Չի էլ լըսի, արնոտ Արա՛զ…
Մեր սարերեն, խոր սրտերեն
Տըխուր – տըրտում կերթա՞ս, Արա՞զ.
Ա՞յ սարե՞ր, Հայ ձորեր,
Ջմրուխտի սարե՞ր.

Դուն էլ, Արա՛զ, մեր արունով
Էս աշխարհի խըղճի վըրա
Դիզվի՛ր, դարձի՛ր սև - դառըն ծով, -
Թո՛ւյն ու արո՛ւն, ազիզ –Արազ…
Մեր սարերեն, մեր սըրտերեն
Արուն քամեր, կերթա՞ս, Արազ.
Ա՞յ սարեր, Հայ սարե՞ր,
Ջա՞ն, անուշ սարե՞ր,
Ալմաստի սարե՞ր…

Վիեննա
1901